



Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների
նախարարի
2020 թվականի մարտի 11-ի
N 23-Լ հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

**2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	1
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
I.ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ	4
II.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	4
III. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ	5
IV.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	5
V. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	9
VI.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ	10
6.1. Կրթություն	10
6.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր	12
6.3. Առողջապահություն	13
6.4. Սոցիալական Պաշտպանություն	16
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	18
7.1. Տրանսպորտ և ճանապարհաշինություն	18
7.2. Խմելու Ջրամատակարարում և Ջրաբերական	19
7.3. Գազաֆիկացում	19
7.4. Էներգետիկա	20
VIII. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	20
IX. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	20
9.1. Տարածքային կառավարում	20
9.2. Տեղական ինքնակառավարում	21
9.3. Քաղաքացիական Հասարակություն	22
9.4. Արտակարգ իրավիճակներից բնապաշտպան և տարածքների Պաշտպանություն	22
X. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	23
XI. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2020Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ	23
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	24

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՁՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀՏՁՌ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն
ՀՏՀՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՎԶԵԲ	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԱԱ	Համախառն ավելացված արժեք
ՏԿԶԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏՀՀՊ	Տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու
ԳՖԿ	Գյուղական ֆինանսավորում կառույց
ՀԳՏՏՀՀ	Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամ
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման N 3 հավելվածով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի զարգացման տեսլականն է՝ **ունենալ կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսություն, զբաղվածության բարձր մակարդակ և ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ:**

Տեսլականին հասնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզի առկա իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները.

- 1) Մինչև 2025թ. ՀՀ Արմավիրի մարզի տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով՝ մինչև 10%,
- 2) Մինչև 2025թ. ՀՀ Արմավիրի մարզի թույլ զարգացած տարածքների անհամաչափությունների նվազեցում՝ 10%-ով,
- 3) Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում:

Սահմանվել են զարգացման երեք առաջնահերթ գերակայությունները.

- 1) Արդյունաբերության աճ՝ շեշտը դնելով փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա, մասնավորապես վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների հիմնում/ ընդլայնում,
- 2) Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում՝ հատկապես Բաղրամյանի տարածաշրջանում,
- 3) Տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, գյուղական և ագրո տուրիզմի վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործառնական ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2020 թվականի գործունեության ծրագիրը մշակվել է՝ առաջնորդվելով «Մարզային զարգացման ծրագրերի մշակում և իրականացում» 2008-2009թթ. մեթոդական ձեռնարկով:

Ծրագրի նպատակներն են.

- 1) համախմբել 2020 թվականի ընթացքում մարզում նախատեսվող բոլոր միջոցառումները՝ մարզի ռազմավարական նպատակների իրականացման համար,
- 2) ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում
- 3) սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումների իրականացման համար:

2020 թվականի գործունեության ծրագրում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման ընթացքին հետևելու է ՀՀ Արմավիրի մարզպետարանը: Ծրագրում ներառված են Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի, համայնքային բյուջեի միջոցներով, վարկային ծրագրերով, մասնավոր ներդրումներով Արմավիրի մարզում 2020 թվականին նախատեսվող ծրագրերն ու միջոցառումները: Միաժամանակ արձանագրվել են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են ծրագրի մշտադիտարկման աշխատանքները:

I.ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ

ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունում բավարար կերպով տրված է աղքատության գնահատումը մարզում: Բացահայտվել են մարզում աղքատությունը պայմանավորող հիմնական գործոնները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտները և դրանց հիման վրա նախանշվել աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու համապատասխան միջոցառումները:

Համաձայն մարզի զարգացման տեսլականի՝ խնդիր է դրվել ունենալ կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսություն, զբաղվածության բարձր մակարդակ ունեցող, ինչպես նաև ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ:

II.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից է:

Արմավիրի մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ակոհոլային խմիչքի արտադրության և օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ: Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացած են քաղաքային համայնքներում:

Մարզում առկա են նաև նախկին արդյունաբերական չօգտագործվող տարածքներ՝ հատկապես քաղաքային համայնքներում և Բաղրամյանի տարածաշրջանի համայնքներում, և մարզի ազգաբնակչության մասնագիտական կարողությունների մեջ դեռևս առկա է արդյունաբերական աշխատողների ներուժ, մարզում գերակա խնդիր է զարգացնել նաև արդյունաբերությունը:

2020 թվականին ևս խնդիր է դրվում բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում՝ համագործակցելով Ներդրումների աջակցման կենտրոնի հետ և ներգրավելով տեղական ինքնակառավարման մարմիններին և համայնքների գործարար ներկայացուցիչներին:

2020 թվականին նախատեսվում է մարզի «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի դահլիճում անցկացնել «Իմ քայլը հանուն Արմավիրի մարզի» ներդրումային համաժողովը՝ մարզում և արտերկրում գործունեություն իրականացնող գործարարների մասնակցությամբ՝ համագործակցելով «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և այլ շահագրգիռ կառույցների հետ: Միջոցառումը կնպաստի ներդրումների ներգրավմանը, փոքր և միջին բիզնեսի զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

2020 թվականի ընթացքում «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը, այդ թվում՝

- 1) Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության առնվազն 2 դասընթաց, որոնց կմասնակցեն շուրջ 30սկսնակ գործարարներ:
- 2) 7-10 ՓՄՁ-ի սուբյեկտների տրամադրել ֆինանսական աջակցություն՝ շուրջ 30-40 մլն ՀՀ դրամի վարկային երաշխավորության տեսքով:

2020թ. մարզում ՓՄՁ ոլորտում նախատեսվում է իրականացնել շուրջ 200.0մլն դրամի ծրագրեր (միջոցառումներ, վարկային երաշխավորությունների տրամադրում):

2020թ. մասնավոր ներդրումներով պլանավորվել է իրականացնել 100.0մլն դրամի ծրագրեր:

III. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Մարզի ռազմավարությամբ առաջնահերթ գերակայություն է սահմանվել տուրիզմի զարգացումը՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, գյուղական և ագրո տուրիզմի վրա: ՀՀ Արմավիրի մարզում արդեն իսկ կան առանձին կազմակերպություններ, որոնք զբաղվում են հոգևոր-մշակութային և էթնիկ տուրիզմով և որոնց հաջողված փորձի տարածումը մարզի այլ համայնքներում կարող է նպաստել մարզում զբոսաշրջության ոլորտի զարգացմանը:

Ոլորտի թույլ կողմերից է՝ տուրիստական ենթակառուցվածքների՝ հյուրատների, հյուրանոցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների բացակայությունը:

Մարզը համագործակցում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի, ՄԱԶԾ «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրի, Ներդրումների աջակցման կենտրոնի, ինչպես նաև տեղական կազմակերպությունների հետ:

Քննարկման փուլում են գտնվում մի շարք ներդրումային ծրագրերի առաջարկներ, մասնավորապես՝ Արմավիրի մարզի զբոսաշրջության պոտենցիալի վերհանումը և իրացումը զբոսաշրջային շուկայում, Արմավիր համայնքում զբոսաշրջային համալիրի հիմնում՝ «Մեր Հայաթ հացարան»-ի ընդլայնմամբ, Գետաշեն համայնքում գյուղական էկոդպրոցի հյուրատան կառուցում, Փարաքար համայնքում զբոսաշրջության զարգացում (հյուրատների կառուցում), մարզում տուրիզմի, ձկնորսության զարգացում, Նորապատ համայնքում արվեստի տուն-մշակութային ակումբի հիմնում, Մյասնիկյան համայնքում հանգստի գոտու տարածքում հյուրատների, լողավազանի և հայկական հացատան կառուցում, Արգավանդ համայնքում ընտանեկան հանգստի գոտու կառուցում, Արմավիրում խեցեգործական արվեստի կենտրոնի հիմնում:

2020թ. պլանավորվում է մշակել զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղված նոր ներդրումային ծրագրեր և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե՝ միջազգային կազմակերպություններին և արտերկրի ներդրողներին ներկայացնելու նպատակով:

2020թ. զբոսաշրջության ոլորտի բյուջեն (մասնավոր ներդրումներով) կազմում է 350.0 մլն դրամ:

IV. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզի ռազմավարությամբ առաջնահերթ գերակայություն է սահմանվել ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը՝ հատկապես Բաղրամյանի տարածաշրջանում:

Գյուղատնտեսության ոլորտի գերակայություններ են սահմանվել գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը/արդիականացումը, նորարարությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և խթանումը:

Ոլորտի թույլ կողմերն են՝ ավանդական գյուղատնտեսության դոմինանտ լինելը, գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածությունը, մեքենայացման, արտադրողականության ցածր մակարդակը, ոռոգման համակարգերի մաշվածության հետևանքով ոռոգման ջրի կորուստները, գյուղատնտեսական մթերքների վերամշակման կազմակերպությունների ոչ բավարար հզորությունը, մթերման ծավալների ցածր մակարդակը:

ՀՀ Արմավիրի մարզի համար խնդրահարույց տարածքներ են համարվում 29 համայնքների 2986 հա աղուտ-ալկալի հողերը և գերնորմատիվային ջրի պահանջարկ ունեցող 25 համայնքները:

2020թ. նախատեսվում է ավելացնել գյուղատնտեսական արտադրության մեջ ընդգրկված հողատարածությունների մակերեսը՝ պայմանավորված խորքային հորերի հորատման և վերանորոգման ծրագրի իրականացման հետ:

ՀՀ Արմավիրի մարզում 2020 թվականին գյուղատնտեսության ոլորտում իրականացվելու են հետևյալ ծրագրերը.

ՀՀ կառավարության 27.09.2018թ. N 1073-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին հատկացված 65.6 մլն.դրամ գումարով և համայնքների 12.4 մլն դրամ համաֆինանսավորմամբ կիրականացվեն ոռոգման համակարգի բարելավմանն ուղղված ծրագրեր 6 համայնքներում.

- 1) Ալաշկերտի խորքային հորի վերականգնում՝ ոռոգման նպատակով (պետական բյուջե՝ 5,400.0 հազ. դրամ, համայնքի բյուջե՝ 600.0 հազ. դրամ)
- 2) Այգեշատ (Էջմ.) ոռոգման համակարգի ներքին ցանցի վերանորոգում (պետական բյուջե՝ 14,550.0 հազ. դրամ, համայնքի բյուջե՝ 450.0 հազ. դրամ)
- 3) Ապագա համայնքում ոռոգման ջրի պոմպակայանի և միջտնտեսային ցանցի կառուցում (պետական բյուջե՝ 21,600.0 հազ. դրամ, համայնքի բյուջե՝ 2,400.0 հազ. դրամ)
- 4) Նորակերտի ոռոգման ջրատարի նորոգում (պետական բյուջե՝ 3,000.0 հազ. դրամ, համայնքի բյուջե՝ 1000.0 հազ. դրամ)
- 5) Շենիկի ոռոգման ցանցի խողովակաշարի միացում մայր ջրանցքին 3կմ-ի չափով (պետական բյուջե՝ 9,800.0 հազ. դրամ, համայնքի բյուջե՝ 4,200.0 հազ. դրամ)
- 6) Վանանդի ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում (պետական բյուջե՝ 11,250.0 հազ. դրամ, համայնքի բյուջե՝ 3750.0 հազ. դրամ):

2020 թվականին նախատեսվում է մարզի համայնքներում սառնարանային տնտեսությունների թիվը ավելացնել 15-ով՝ շուրջ 150 տոննա ընդհանուր տարողությամբ:

2020թ. մասնավոր ներդրումներով և համայնքային բյուջեի միջոցներով նախատեսվում է հիմնել նոր ինտենսիվ այգիներ, անասնապահական ֆերմաներ, ներդնել կաթիլային ոռոգման համակարգեր և հակակարկտային ցանցեր, ձեռք բերել գյուղտեխնիկա, կառուցել սպանդանոց:

2020թ. Զրային կոմիտեի «Զրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից, Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ մարզում նախատեսվում է իրականացնել Ոռոգման համակարգերի արդիականացում ներդրումային ծրագիրը, մասնավորապես՝ Ստորին Հրազդանի մայր ջրանցքի առավել վթարային 10 հատվածների, երկրորդ կարգի ջրանցքների վերականգնման և 41 համայնքների 91630մ երկարությամբ ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնման աշխատանքները՝ 4,213,511.2 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Ծրագրերն իրականացվելու են համայնքների 10% համաֆինանսավորմամբ:

2020թ. մարզում նախատեսվում է հորատել 18 և վերանորոգել 14 խորքային հոր:

2020թ. Ակնալիճ և Արշալույս համայնքներում կայուն ոռոգման համակարգեր ստեղծելու նպատակով նախատեսվում է պետության աջակցությամբ անցկացնել կաթիլային ոռոգում (գյուղացիական տնտեսությունները ձեռք են բերելու միայն իրենց հողատարածքի կաթիլային ոռոգման համար նախատեսվող ջրցան խողովակները):

2020թ. անասնաբուծությամբ զբաղվելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2019 թվականին մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են պետական օժանդակության հետևյալ ծրագրերը, որոնք ընդգրկում են հանրապետության ամբողջ տարածքը.

1. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 327-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագիրը, որով նախատեսվում է տրամադրել սուբսիդավորվող տոկոսադրույքով վարկեր՝ 5 տարի

մարման ժամկետով: Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումն իրականացվում է այնպես, որպեսզի վարկերը տրամադրվեն 2% տոկոսադրույքով, իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողներին և գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվներին՝ 0% տոկոսադրույքով:

Ծրագրով տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների՝ ըստ մթերատվության ուղղության (կաթնային, մսային և համակցված) ցեղերի նկատմամբ որևէ նախապայման չի սահմանվում, բացառությամբ՝ դրանց սեռահասակային խմբերի՝ երինջներ և 14-17 ամսական էգ մատղաշ: Ծրագրի շրջանակում ձեռք բերվող 1 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների հաշվարկային առավելագույն արժեք է ընդունվել 1.0 մլն դրամը: Ծրագրով յուրաքանչյուր շահառու տարեկան կարող է ձեռք բերել առավելագույնը 300 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանի, իսկ ծրագրի շրջանակում տրամադրվող վարկերի հանրագումարի մնացորդը մեկ շահառուի համար չի կարող գերազանցել 300 մլն դրամը: Վարկավորման գործընթացը նախաձեռնում են շահառուները՝ վարկ ստանալու համար դիմելով «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «Ամերիաբանկ», «Արդշինբանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Կոնվերսբանկ» ՓԲԸ, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, «Կամուրջ», «Ֆարմ Կրեդիտ Արմենիա», «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ», «Ագրոլիզինգ», «Անիվ», «ՀԶ ԵՎ ՆԿ» ՈՒՎԿ-ներին: Անհրաժեշտ է վերոնշյալ ֆինանսական կառույց ներկայացնել տոհմային խոշոր եղջերավոր կենդանի ձեռք բերելու վերաբերյալ դիմում-հայտ՝ նշելով դրանց քանակը, ձեռքբերման վայր(եր)ը (հասցե), ներմուծման դեպքում՝ ներկրման ժամկետները, ինչպես նաև Նախարարություն ներկայացնել ձեռքբերման ենթակա խոշոր եղջերավոր կենդանիների Տոհմային վկայականները և քարտերը:

2. ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 369-Լ որոշմամբ հաստատվել է «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագիրը, որի շրջանակներում անկապ բոքսային պահվածքով «Խելացի» անասնաշենքի կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման համար տրամադրվում է փոխհատուցում 50%-ի, իսկ սահմանամերձ սոց. աջակցություն ստացող համայնքներին՝ 70%-ի չափով:

3. ՀՀ Կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի 1305-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության» ծրագիրը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռք բերման մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցությունը իրականացնել 2 եղանակով.

ա) Տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռք բերման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում, որի դեպքում վարկերը կտրամադրվեն մինչև 4 տարի մարման ժամկետով, առավելագույնը 12% տոկոսադրույքով, որից սուբսիդավորվելու է առավելագույնը 10 տոկոսային կետն այնպես, որ վարկերը շահառուին տրամադրվեն 2% տոկոսադրույքով, իսկ սահմանամերձ համայնքների (ՀՀ կառավարության 18.12.2014թ. N 1444-Ն որոշում) տնտեսավարողներին կամ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվներին՝ 0% տոկոսադրույքով:

Վարկավորման գործընթացը նախաձեռնում են այն ֆինանսական կառույցները, որոնց դիմում են շահառուները. շահառուն ֆինանսական կառույց է ներկայացնում տոհմային մանր եղջերավոր կենդանի ձեռք բերելու վերաբերյալ դիմում-հայտ՝ նշելով ձեռքբերվող տոհմային մատղաշի քանակը,

ձեռքբերման (ներկրման) վայրը (վայրերը), ձեռքբերման ժամկետները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) է ներկայացնում ձեռքբերման ենթակա տոհմային մանր եղջերավոր կենդանիների հավաստագրերը (վկայականները, քարտերը)՝ դրանց հիման վրա ձեռքբերման ենթակա մանր եղջերավոր կենդանիների տոհմային լինելու մասին ֆինանսական կառույցին անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն տալու նպատակով:

բ) Կատարված ծախսի փոխհատուցում. այս դեպքում կփոխհատուցվի Շահառուի կողմից յուրաքանչյուր գլուխը մինչև 450 հազար ՀՀ դրամ արժեքով ձեռք բերված տոհմային մատղաշի համար փաստացի վճարված գումարի (չհաշված տեղափոխման ծախսերը) 23 %-ը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվների կողմից մինչև 450 հազար ՀՀ դրամ արժեքով ձեռք բերված տոհմային մանր եղջերավոր կենդանիների համար՝ 27%-ը:

Փոխհատուցման գործընթացը նախաձեռնում են գյուղատնտեսությունում տնտեսավարողները՝ մինչև տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռքբերման (ներկրման) աշխատանքների սկսվելն էլեկտրոնային և (կամ) թղթային տարբերակով դիմելով Նախարարություն:

Տոհմային մատղաշ ձեռքբերելուց հետո հաշվառված Շահառուն փոխհատուցում ստանալու նպատակով էլեկտրոնային կամ թղթային տարբերակով դիմում է Նախարարություն՝ դիմումին կից ներկայացնելով ձեռք բերված կենդանիների հավաստագրերը (վկայականը, քարտը), կենդանիների դիմաց վճարման անդորրագրերը, հաշիվ-ապրանքագրերը, կենդանիների առողջական վիճակը հավաստող անասնաբուժական վկայականը (ներկրման դեպքում արտահանվող երկրում տրված ձևը ևս), համայնքում կենդանիների հաշվառման տեղեկանքը, բանկային հաշվեհամարը:

Ծրագրի շրջանակում ձեռք բերվող 1 գլուխ տոհմային մանր եղջերավոր կենդանիների հաշվարկային առավելագույն արժեք է ընդունվել 450 հազար ՀՀ դրամը: Ծրագրով մեկ շահառուի վարկի առավելագույն չափ է սահմանվել 900 մլն դրամը (առավելագույնը 2000 գլուխ տոհմային մանր եղջերավոր կենդանիների, այդ թվում՝ 100 գլխից ոչ ավել տոհմային արու մատղաշ (ոչխարի և այծի), իսկ միայն 1-ին տարվա համար ոչ ավել քան 450 մլն ՀՀ դրամը (առավելագույնը 1000 գլուխ տոհմային մանր եղջերավոր կենդանիներ, այդ թվում՝ 50 գլխից ոչ ավել տոհմային արու մատղաշ (ոչխարի և այծի)):

Ծրագրով տոհմային մանր եղջերավոր կենդանիների՝ ըստ մթերատվության ուղղության (կաթնային, մսային, բրդային) ցեղերի ընտրության նկատմամբ որևէ նախապայման չի սահմանվում, բացառությամբ՝ դրանց սեռահասակային խմբերի՝ մինչև 18 ամսական հղի ոչխարներ և այծեր, 4-16 ամսական էգ և 6-16 ամսական արու մատղաշ (ներկրման դեպքում արտահանվող երկրում կարանտինի կանգնեցնելու, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ առուվաճառքի պայմանագրի կնքման դրությամբ)՝ 20:1 հարաբերությամբ (20 էգի հաշվով 1 արու):

3. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշմամբ հաստատվել է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը, որի շրջանակներում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվում են 3-15 մլն դրամ գումարի սահմաններում վարկեր, ընդ որում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի (այսուհետ՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրեր) համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 0%, հանրապետության մնացած համայնքների տնտեսավարողներին՝ 5%, իսկ գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3% տոկոսադրույքով:

Սուբսիդավորվող վարկերի տրամադրման հայտի ընդունման, քննարկման և վարկի տրամադրման նախապայման է հանդիսանում նախարարության կողմից տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը:

2020թ. նախատեսվում է ոլորտում իրականացնել համայնքների սուբվենցիայի նոր ծրագրեր՝ շուրջ 93.0 մլն դրամ արժեքով:

2020թ. գյուղատնտեսության ոլորտի բյուջեն կազմում է 5,054.2 մլն դրամ:

Հողաշինություն և հողօգտագործում. 2020թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել՝

1) Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշման՝ սահմանված կարգով մարզի հողային հաշվեկշռի կազմում և կառավարության հաստատմանը ներկայացում:

2) Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N 186-Ն հրամանի՝ մի շարք համայնքներում իրականացնել քարտեզագրման ժամանակ թույլ տված սխալի ուղղման գործառույթներ:

3) Վանանդ համայնքում իրավաբանական անձի կողմից 800 հա-ի վրա հիմնված այգիների կաթիլային ոռոգումն ապահովելու նպատակով կառուցվող ջրամբարի հողաշինարարական աշխատանքների աջակցություն (նպատակային նշանակության փոփոխություն):

4) ՀՀ կառավարության համապատասխան որոշումների մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենսդրական առաջարկությունների ներկայացումներ (Աղավնատուն, Արտիմետ):

5) Մարզի համայնքներում տարվա ընթացքում իրականացվող հողաշինարարական այլ գործառույթներ՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխություններ, բարձրարժեք հողատեսքերը ցածրարժեքի փոխադրելու վերաբերյալ եզրակացությունների տրամադրում:

Վ. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի բնապահպանական հիմնախնդիրներն են՝ ջրային պաշարների ոչ բավարար քանակությունը, անտառների բացակայությունը, մարզում աղբի կառավարման համակարգերի սահմանափակությունը, բնակչության իրազեկվածության ցածր մակարդակը բնապահպանական խնդիրների հետ կապված, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածությունը, կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանի բացակայությունը, կոշտ կենցաղային թափոնների կառավարման անբավարար մակարդակը, աղակալված հողերի առկայությունը, իսկ որպես սպառնալիքներ՝ ՀԱԷԿ-ի առկայությունը մարզում, մարդատար և բեռնատար տրանսպորտի բարձր խտությունը, ստորերկրյա ջրային պաշարների նվազման միտումը, կլիմայի փոփոխությունները՝ շոգ ամառների և խստաշունչ ձմեռների տևողության ավելացումը, տեղումների քանակի նվազումը, երաշտների առաջացման հնարավորությունների մեծացումը:

ՀՀ Արմավիր մարզի համայնքի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի բարելավման, Արմավիր, Մեծամոր համայնքների կոյուղու մաքրման կայանի կառուցման ծրագրերն ընդգրկված են Գերմանիայի KfW Բանկի, Եվրոպական Ներդրումային Բանկի, Եվրամիության ՀՆԾ կողմից ֆինանսավորվող «Համայնքային ենթակառուցվածքի ծրագիր (ՀԵԾ) II Փուլ 3» ծրագրով 2019 թվականից մեկնարկվող աշխատանքների ցանկում:

2020թ. բնապահպանության ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 39.0 մլն դրամ:

VI. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

6.1. Կրթություն

ՀՀ Արմավիրի մարզի կրթական համակարգն ընդգրկում է նախադպրոցական, հանրակրթական (տարրական, հիմնական և ավագ), միջին մասնագիտական (նախնական արհեստագործական և միջին մասնագիտական) և բուհական համակարգերը: Մարզի բնակչությունը օգտվում է Երևան քաղաքի մոտ լինելու հանգամանքից և օգտագործում մայրաքաղաքի կրթական համակարգը միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու համար:

Ոլորտի գերակա խնդիրներն են՝ համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովումը, որը հնարավորություն է ընձեռում անձին՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության, 3-5 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիության, ինչպես նաև 5 տարեկանների առավել ընդգրկվածության ապահովումը, ինչպես նաև մարզի շուկայի կարիքները բավարարող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստումը:

Միջին մասնագիտական կրթության համակարգում ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ շարունակել բացառապես մարզի կարիքները բավարարող մասնագետների պատրաստման պատվերների ձևավորման աշխատանքները:

Մարզում նախադպրոցական կրթությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով կրթության որակ և համապատասխանություն ծրագրի շրջանակներում 2020թ. նախատեսվում է շարունակել մանկապարտեզներ չունեցող ևս 10 համայնքներում նախադպրոցական միկրոծրագրերի իրականացումը՝ դպրոցահեն նախակրթարաններ ստեղծելու միջոցով:

Միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ նախատեսվում է քննարկել մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստեղծման հնարավորությունների խնդիրը, որը կլուծի 12-18 տարեկան երիտասարդների ՏՏ ոլորտի գիտելիքների հաղորդումը:

2020 թվականին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից Արմավիրի մարզում նախատեսվող ծրագրերն են.

- Համընդհանուր ներառական կրթության իրականացման շարունակականության ապահովում
- Ուսուցիչների վերապատրաստում
- Ուսուցիչների ատեստավորում
- Տարակարգի շնորհում
- <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթի կազմակերպում
- <<Անգլերենի ակումբների>> հիմնում, անգլերենի ուսուցիչների վերապատրաստման կազմակերպում՝ Բրիտանական խորհրդի իրականացմամբ /մարզում ներդրված ակումբների գործունեության շարունակականության ապահովում/
- Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրում
- Համաեվրոպական համագործակցության E-twinning ծրագրի իրականացում
- Ռեբրտաշինական խմբակների և ինժեներական լաբորատորիաների պահպանման և դրանց ընդլայնման գործընթացի իրականացում
- <<Ազգային երգ ու պար>> առարկայի ներդրման գործընթացի շարունակականության ապահովում /ըստ մարզերից ստացված հայտերի/

- Ֆինանսական, ձեռնարկատիրական կրթության ծրագրի ընդլայնում և դրանում ընդգրկված ուսուցիչների վերապատրաստման իրականացում
- Մասնագիտական կենտրոնների ներդրում
- 12 ամյա պարտադիր կրթության ապահովման և կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող սովորողների բացահայտման և հայտնաբերման համակարգի ներդրում
- ՀՀ ԿԳՄՍՆ ԿՏԱԿ-ի հենքի վրա ՀՀ եռաձև ուսուցման կենտրոնի>> հիմնադրում՝ հեռավար ուսուցման կազմակերպման նպատակով

2020 թվականին հանրակրթության ոլորտում շարունակվող ծրագրերն են՝

- Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների և նոր ձևավորված 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստումների շարունակում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կրթության ազգային ինստիտուտի և դրա մասնաճյուղի ու Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ռեսուրսների միջոցով,
- Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի կիրառում՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ներդրման արդյունավետության ապահովում,
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատում և վկայագրում,
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում հանրակրթության ինտեգրման գործընթացում, շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցություն, ոլորտում եղած լավագույն փորձի ներկայացում և տարածում,
- Առարկայական օլիմպիադների կազմակերպում,
- Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն,
- Ավարտական և միասնական քննությունների կազմակերպում,
- Կրթության ոլորտում թափուր հաստիքների, անցկացվող մրցույթների և այլ տեղեկատվության հրապարակայնության ապահովում:

Նախատեսվում է մի շարք համայնքներում վերանորոգել և հիմնանորոգել նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

- Նախատեսվում է դպրոցների մասնակի վերանորոգումներ, լոկալ ջեռուցման համակարգերի անցկացում
- Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսվում է Պտղունք, Փարաքար, Մրգաշատ և Ջրարբի միջնակարգ դպրոցների կառուցում: Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող <<Կրթության բարելավում>> վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Վաղարշապատի Մ.Գորկու անվան N 5 ավագ դպրոցի մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքները: Ընդհանուր առմամբ 5 դպրոց:
- ՀՀ պետական բյուջեի <<1183 Ապահով դպրոց>> ծրագրի շրջանակներում Արգինա համայնքում նախատեսվում է փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքի կառուցում

2020թ. Կրթության բարելավում վարկային ծրագրով նախատեսվում է մարզում իրականացնել ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչական և մանկավարժական աշխատակազմի վերապատրաստում տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ ծրագիրը, որի

արդյունքում կվերապատրաստվեն ՀՀ բոլոր մարզերի 1500 աշխատակիցներ՝ 33750 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ:

2020թ. մի շարք միջոցառումներ են նախատեսվում իրականացնել մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության ոլորտում:

2020թ. պետական բյուջեով հատկացվել է 7,776.2մլն. դրամ՝ տարրական, հիմնական, միջնակարգ ընդհանուր հանրակրթություն, նախադպրոցական կրթություն, ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում ծրագրերի համար:

2020թ. կրթության ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 10,866.9 մլն.դրամ:

6.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր

Մշակույթ. 2020թ. ևս մարզպետարանի գործունեությունը կնպատակաուղղվի մարզում պետական մշակութային քաղաքականության իրականացմանը, մարզի մշակութային դերի բարձրացմանը, մշակութային ու հոգևոր ժառանգության պահպանմանը, ազգային արժեքների ու ավանդույթների վերականգմանն ու տարածմանը, պետական, ազգային ու այլ տոների, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, թանգարանների, գրադարանների, մշակութային այլ օջախների նպատակային գործունեության ապահովմանը, կադրային քաղաքականության և մշակութային կրթության զարգացմանն ու առաջընթացին, հայ ընտանիքի բարոյական նորմերի պահպանմանը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը, երիտասարդության շրջանում տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

Արմավիրի մարզում մշակութի բազավառում պետական և մարզային միջոցառումների ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև տարբեր մշակութային, կրթական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպվելու են բազմաթիվ միջոցառումներ, փառատոներ, ցուցահանդեսներ, մրցույթներ՝ նվիրված պետական, ազգային և այլ տոներին, ազգային ավանդական ծեսերին ու ավանդույթներին, նշանավոր մարդկանց, իրադարձությունների հոբելյաններին ու տարելիցներին, անցկացվելու են հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, ցերեկույթներ, գրքերի շնորհանդեսներ, քննարկումներ, կինոդիտումներ, պոեզիայի ժամեր, տիկնիկային և թատերական ներկայացումներ և այլն:

2020թ. ՀՀ պետական բյուջեով մարզպետարանին հատկացվել է շուրջ 40.9մլն դրամ, Արմավիրի մարզում երկու խոշոր միջոցառումներ և նվագարանների գծով ուսուցում իրականացվելու համր, մասնավորապես՝

- 1) Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերին նվիրված միջոցառում,
- 2) Հայաստանի Հանրապետության անկախության օրվան նվիրված միջոցառում,
- 3) Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում:

Սպորտ և երիտասարդության հարցեր. Արմավիրի մարզը հանրապետության մարզական նվաճումներով աչքի ընկնող մարզերից է: Մարզի մարզիկները պարբերաբար մասնակցում են տարբեր մարզաձևերից մեծահասակների, երիտասարդների և պատանիների աշխարհի, Եվրոպայի և միջազգային այլ առաջնություններին՝ մարզում հենակետային համարվող չորս մարզաձևերից՝ ըմբշամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ, շախմատ, և ունեն նշանակալի հաջողություններ ու ձեռքբերումներ՝ մեդալներ օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի և միջազգային առաջնություններում:

Մարզում պետական երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման մարմինների, ՏԻՄ-երի, բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների, երիտասարդության հարցերով զբաղվող ՀԿ-ների և այլ մարմինների կողմից:

Ոլորտի թույլ կողմերից է Արմավիր և Մեծամոր քաղաքներում, ինչպես նաև գյուղական բնակավայրերում մարզամշակութային և ժամանցի վայրերի բացակայությունը:

2020 թվականին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից Արմավիրի մարզում նախատեսվող ծրագրերն են

- ՀՀ «Ազգային ժողովի գավաթի» խաղարկություն
- Հայաստանի Անկախության հռչակման օրվան նվիրված մարզի դպրոցականների մարզական խաղեր
- ՀՀ դպրոցականների հանրապետական մարզատուրիստական խաղեր
- «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում
- «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացում
- «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում
- «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում
- «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում
- Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում
- Հանրապետական մարզական փառատոնի անցկացում
- Հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների սպարտակիադայի անցկացում
- Գյուղական մարզական խաղերի անցկացում
- Տարեցների հանրապետական խաղերի անցկացում
- Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթի անցկացում,

2020թ. մշակույթ, սպորտ և երիտասարդության ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 122.4 մլն.դրամ:

6.3. Առողջապահություն

Բուժօժանայությունների որակի և մատչելիության բարձրացումը մարզում սահմանվել է որպես ոլորտային գերակա նպատակ: Այս նպատակին է միտված առողջության առաջնային օղակի պահպանման և շտապ բուժօգնության հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տուբերկուլյոզի, մալարիայի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և վարակիչ այլ հիվանդությունների կանխարգելման ուղղությունները: Առողջապահության համակարգի զարգացման միջոցառումները մշակելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մարզային յուրահատկություններին:

Ոլորտի թույլ կողմերից է որոշ գյուղական ամբուլատորիաների ոչ բավարար պայմանները:

2020 թվականին Առողջապահության նախարարության կողմից շարունակաբար իրականացվելու են այն ծրագրերը, որոնք մեկնարկել են նախորդ տարիներին, ինչպես նաև ներդրվելու են նոր ծրագրեր, մասնավորապես.

1. «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ՀԲ ծրագրի շրջանակում իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների (զարկերակային գերճնշում, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) սքրինինգային ծրագիրը՝ ուղղված ՈՎՀ կանխարգելմանն ու վաղ ախտորոշմանը: Այդ ծրագրի շրջանակներում 35-ից 68 տարեկան բոլոր քաղաքացիները հնարավորություն ունեն անվճար հետազոտվել զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի,

իսկ 30-ից 60 տարեկան բոլոր կանայք՝ ՊԱՊ թեստի հետազոտության միջոցով արգանդի պարանոցի նախաքաղցկեղի վաղ ախտորոշման և քաղցկեղի կանխարգելման նպատակով:

2020 թվականին նախատեսված է սքրինինգային ծրագրերի ծավալների ավելացում, մասնավորապես՝ ՀՀ երեք մարզերում (Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզեր) կմեկնարկեն կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելման և վաղ հայտնաբերման սքրինինգային հետազոտությունները, որոնք իրականացվելու են ՀՀ և Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամի միջև ստորագրված «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ՀՀ Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերի 50-69 տարեկան կանանց անցնել մամոգրաֆիայի անվճար հետազոտություն: Բացի այդ, 2020 թվականին առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, նախատեսվում է կոլոռեկտալ քաղցկեղի փորձարարական սքրինինգային ծրագրի իրականացում՝ ռիսկի խմբում ընդգրկված 50-75 տարեկան անձանց շրջանում, ընտրված ԱԱՊ 2 հաստատություններում (մեկը՝ Երևանում, մյուսը՝ ՀՀ Շիրակի մարզում):

2. Առողջապահության նախարարի 12.03.2019թ. թիվ 611-Ա հրամանով Հայաստանում ներդրվել է սանիտարական ավիացիայի ծառայություն, որի նպատակն է հեռավոր մարզերում բնակչությանն առավել որակյալ շտապ բժշկական օգնության կազմակերպումը՝ պացիենտի ուղղաթիռով տեղափոխումը և Երևանի առաջատար բժշկական կենտրոններում մասնագիտացված բժշկական օգնության կազմակերպումը: Սանիտարական ավիացիայի ծառայության միջոցով հեռավոր մարզերից պացիենտների ուղղաթիռով տեղափոխումը շարունակաբար իրականացվելու են նաև 2020 թվականին:

3. Կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված անձինք, բացի անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ անցնելու արտոնություններից, կարող են օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից: Դրանք են՝ գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժում, սրտի բաց վիրահատություն, կորոնար անոթների բալոնային դիլատացիա, կորոնար անոթների ստենտավորում, սրտի փականների պրոթեզավորում, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիա, աորտայի անևրիզմաների պատռվածքների և շերտազատումների վիրահատություններ, կարդիոլերտեր-դեֆիբրիլատորի իմպլանտացիա, սրտի կաթետերային աբլացիա, շագանակագեղձի միջմիզուկային մասնահատում, քարափշրում, սկլերոպլաստիկա, կեռատոպլաստիկա, կլիպսների և շունտավորող համակարգերի օգտագործում՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ, խոշոր և պերիֆերիկ անոթների բալոնային դիլատացիա և ստենտավորում:

4. Պետական պատվերի շրջանակներում շարունակելու է իրականացվել անվճար՝ ախտորոշված չարորակ նորագոյացություններով պացիենտների վիրահատական բուժումը, հաստատված չարորակ ուռուցքաբանական և արյունաբանական ախտորոշումներով պացիենտների համար ճառագայթային բուժումը ներխոռոչային սարքերով՝ TERAGAM ճառագայթային սարքով և ELEKTA էլեկտրոնային արագացուցիչով և գլխուղեղի սուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբեկտոմիայի ծրագիրը՝ ամբողջ բնակչության համար: Միաժամանակ տեղեկացնում են, որ 2020 թվականին նախատեսվում է իրականացնել նախապատրաստական աշխատանքներ՝ 2021 թվականից վերոնշյալ ծրագրի շրջանակներում թրոմբոլիտիկ բուժումն ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում և ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացնելու համար:

5. ՀՀ ամբողջ բնակչության համար ընդլայնվել են պետական պատվերի շրջանակներում անվճար պայմաններով մատուցվող սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) ծառայությունները, որոնք շարունակաբար իրականացվելու են նաև 2020 թվականին:

6. Ընդլայնվել են նաև նորագույն ու թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ցանկում ընդգրկված 15 և ավելի MeV (մեգաէլեկտրոնվոլտ) հզորություն ունեցող բժշկական գծային արագացուցիչով (այդ թվում VARIAN սարքով) պետական պատվերի շրջանակներում ճառագայթային բուժման իրավունք ունեցող շահառուների շրջանակը:

7. ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ բոլոր բնակավայրերում իրականացվում է խմելու ջրի որակի դիտարկում, որի արդյունքները՝ ամսական, կիսամյակային և տարեկան վերլուծությունների ձևով տրամադրվում են շահագրգիռ մարմիններին, իսկ հայտնաբերված շեղումները տրամադրվում են Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին՝ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

Բացի այդ, ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվելու են 2020 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում պլանավորված, պետական պատվերով նախատեսված հետևյալ ծրագրերը.

- 1) Կառավարության 17.03.2016թ. թիվ 10 արձանագրային որոշմամբ հաստատված «2016-2020 թվականների իմունականխարգելման ազգային ծրագիր»,
- 2) Կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի նիստի N 55 արձանագրային որոշմամբ հաստատված «Տրավմատիզմի կանխարգելման 2015-2020 թվականների ծրագիր»,
- 3) Կառավարության 04.02.2016թ. նիստի N 4 արձանագրային որոշմամբ հաստատված «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի 2016-2020 թվականների ծրագիր»,
- 4) Առողջապահության նախարարի 06.04.2018թ. թիվ 914-Ա հրամանով հաստատված «ՀՀ-ում բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների վերահսկման և կանխարգելման 2018-2022 թվականների նպատակային ծրագիր»,
- 5) Առողջապահության նախարարի 16.11.2017թ. թիվ 3280-Ա հրամանով հաստատված «Ուսուցիչներին՝ առողջ ապրելակերպի խթանման հարցերով ուսուցման ծրագիր»,
- 6) Առողջապահության նախարարի 27.05.2019թ. թիվ 1387-Լ հրամանով հաստատված «Արտաընդերային վիրուսային հեպատիտների 2019-2023 թվականների ազգային ծրագիր»,
- 7) Առողջապահության նախարարի 21.11.2018թ. թիվ 2999-Ա հրամանով հաստատված «Մանկական վնասվածքների կանխարգելման ռազմավարական ծրագիր» և «Մանկական վնասվածքների կանխարգելման 2018-2023 թվականների միջոցառումների ծրագիր»,
- 8) Առողջապահության նախարարի 04.12.2018թ. թիվ 3135-Ա հրամանով հաստատված «Սպորտային վնասվածքների կանխարգելման ռազմավարական ծրագիր» և «Սպորտային վնասվածքների կանխարգելման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիր»:

2020թ. համար պլանավորվել է առողջապահական կազմակերպությունների տարեկան բյուջեում վճարովի ծառայությունների տեսակարար կշռի 10%-ով աճ՝ 2019 թվականի համեմատ:

2020թ. վճարովի ծառայությունների աճ ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործառնությունները.

- 1) Ստվերային շրջանառության բացառում
- 2) Բուժման բավարար պայմանների ապահովման նպատակով կենտրոնի ստացիոնար բաժանմունքների ընթացիկ և կոսմետիկ վերանորոգում
- 3) Բարոյապես մաշված բժշկական սարքավորումների և կահույքի փոխարինում նորով
- 4) Նոր տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրում (հատկապես ռենտգեն սարքավորում)
- 5) Կադրային համալրում՝ վիրաբույժ, մանկաբույժ, անեսթեզյոլոգ

6) Մատուցվող ծառայությունների գների վերանայում

7) Պետական պատվերի ձևավորման եղանակի վերանայում՝ այն համապատասխան գործակցով կապելով վճարովի ծառայությունների հետ:

2019թ. տարեկան գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատություններին հատկացնել է 3489046.9 հազ. ՀՀ դրամ, այդ թվում մարզպետարանի ենթակայության բուժ հաստատությունների գումարը կազմել է՝ 2.292.693.0 հազ. ՀՀ դրամ: 2020թ. ակնկալվում է 2019թ. գլոբալ բյուջեի համեմատ 5%-ով աճ (ճշտված գլոբալ բյուջեն կիրառարակվի 2020թ. փետրվար ամսին):

2020թ. պետական բյուջեի միջոցներով կիրականացվի «Վաղարշապատի հիվանդանոց» ՊԲԲԸ-ի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում՝ կվերանորոգվի հիվանդանոցի մի մասնաշենքը:

«Էջմիածին ԲԿ»-ի սեփական միջոցներով կիրականացվեն բժշկական կենտրոնի երրորդ հարկի վերանորոգման աշխատանքները՝ 29.0 մլն դրամ արժեքով:

2020թ. առողջապահության ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 3,023.0մլն դրամ:

6.4. Սոցիալական պաշտպանություն

Սոցիալական պաշտպանության ոլորտում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը համարվում է զարգացման հիմնական նպատակ:

2020թ. նախատեսվում է Էջմիածնում սկսել և ավարտել ինտեգրված սոցիալական աշխատանքի կազմակերպման գործընթացը, Բաղրամյանում և Արմավիրում շարունակել ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցումը մեկ պատուհան սկզբունքով: 2020թ. ևս կշարունակվի զոհված, մահացած զինծառայողների ընտանիքի անդամների և զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային ապահովության հիմնահարցերի լուծման ՀՀ կառավարության ծրագիրը: 2020թ. նախատեսվում է շարունակել խոցելի սոցիալական խմբերի հետ տարվող աշխատանքը:

2020թ. մարզում իրականացվող զարգացման ծրագրերում և ՓՄԶ-ի հետ կազմակերպվող ծրագրերում հնարավորինս շատ ներառել մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված և աշխատանք փնտրող անձանց:

ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի N 1025-Լ որոշման N 2 հավելվածով հաստատված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2019 թվականի տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումների ցանկով մարզպետարանին վերապահված է իրականացնել հետևյալ գործողությունները, որի նպատակով 2020թ. նախատեսվում է շարունակել.

- Համընդհանուր ներառմանն ուղղված աշխատանքներ՝ հանրակրթական դպրոցներում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքի վկայագրում և յուրաքանչյունին իր կարիքի համապատասխան տեղավորում
- Հանրակրթական դպրոցներում իրականացնել մոնիթորինգ՝ ներառական կրթության ծրագրերում ընդգրկված երեխաների հետ տարվող աշխատանքների և գնահատման եռաստիճան համակարգի իրականացման վերաբերյալ
- Հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժական աշխատողների վերապատրաստում
- Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին ցուցաբերել աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների հետ տարվող վերականգնողական և այլ աջակցության ծրագրերի շարունակականությունն ապահովելու նպատակով
- Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի աշխատանքների իրականացում:

ՀՀ կառավարության 2018թ. սեպտեմբերի 27-ի N 1022-Լ որոշման N1 հավելվածով հաստատված «Երեխայի իրավունքների պաշտպանության 2019 թվականի տարեկան ծրագիր» նախատեսված միջոցառումների շրջանակներում 2020թ. ընթացքում մարզում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ԿԴԻՀ և ԱԾԽՄ երեխաների իրավունքների պաշտպանություն, երեխայի խնամքը ընտանեկանին առավել մոտ պայմանների ապահովում, որդեգրման գործընթացի ապահովում, խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացում մարզում,
- բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա հաստատություններում խնամք ստացող երեխաների ընտանիք վերադարձի ապահովումը,
- բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններից ընտանիք վերադարձած երեխաների ընտանիքների հետ շարունակական աշխատանքների իրականացումը,
- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, նրանց ընտանիքների հիմնախնդիրների վերհանումը, գնահատված կարիքների հիման վրա սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական գործնական աջակցության ցուցաբերումը,
- բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման նպատակով այլընտրանքային ծառայությունների մատուցող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում և մարզում նոր այլընտրանքային ծառայությունների ստեղծման խթանումը,
- սոցիալապես անապահով և հատուկ (առանձին) խմբերում ընդգրկված երեխաների (անկախ տարիքից) և մինչև 7 տարեկան խրոնիկ հիվանդ երեխաների (անկախ սոցիալական կարգավիճակից) վերականգնողական-առողջարանային բուժման ապահովումը:

2019թ. ընթացքում մարզում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մարզում պլանավորված ծրագրերն ու միջոցառումները հետևյալն են.

- Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում,
- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում,
- Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում,
- Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում
- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում

ա) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին

բ) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին

- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում,
- Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում,

- Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում,
- Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում,
- Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկին ժամանակավոր զբաղվածության ապահովում,
- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրում:

2020թ. մարզում զբաղվածության կարգավորման պետական բոլոր ծրագրերում կընդգրկվեն 589, շահառուներ ոլորտում նախատեսվում է իրականացնել շուրջ 158.5մլն. դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրեր:

2020թ. մարզում կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագրով նախատեսվում է իրականացնել շուրջ 2,564,6մլն. դրամ ընդհանուր արժողությամբ:

2020թ. սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 2,789.5 մլն դրամ:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

7.1. Տրանսպորտ և ճանապարհաշինություն

Արմավիրի մարզը տարածքի հաշվով ամենախիտ ճանապարհային ցանց ունեցող մարզն է, որի ճանապարհային խտության բարձր աստիճանը կապված է միջպետական և տեղական ճանապարհների բարձր խտությամբ:

ՀՀ Արմավիրի մարզն ունի զարգացած տրանսպորտային ցանց, մարզի բնակչության 99%-ը ապահովված է մշտական երթուղային տրանսպորտային կապով: Արմավիրի մարզի հիմնական երթուղիները Բաղրամյանը, Արմավիրը և Վաղարշապատը միմյանց և Երևանին կապող երթուղիներն են: Մարզի համայնքներից մարզկենտրոն և տարածքային կենտրոններ գործում են 11 ավտոբուսային երթուղիներ և 11 միկրոավտոբուսային երթուղիներ: Մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում է 4 ավտոբուսային և 12 միկրոավտոբուսային, իսկ դեպի այլ մարզեր՝ 3 ավտոբուսային և 2 միկրոավտոբուսային միջմարզային կանոնավոր երթուղիներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Ոլորտի թույլ կողմերն են՝ տրանսպորտային միջոցների մաշվածությունը, ճանապարհային ենթակառուցվածքների մաշվածության բարձր աստիճանը, հատուկ կարիքներով և սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով մարդկանց համար նախատեսված ծառայությունների բացակայությունը: Գնացած ճանապարհաշինության ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է առկա ճանապարհային ցանցի հիմնանորոգմանը, վերականգնմանն ու պահպանմանը: Ոլորտում դեռևս շարունակում է առաջնային լինել ճանապարհների հիմնանորոգման հարցը, միջպետական, հանրապետական, մարզային և միջհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը՝ մարզային (տեղական) նշանակության ճանապարհների զգալի մասը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով տասնյակ տարիներ չեն նորոգվել, որի արդյունքում քանդվել են և դարձել տրանսպորտային միջոցների երթևեկության համար դժվարանցանելի: Նորոգման կարիք ունեն նաև կամուրջները, ուստի կամուրջների պահպանման համար անհրաժեշտ է նախատեսել ֆինանսական միջոցներ:

2020թ. ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 65,5մլն դրամ մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների համար:

2020թ. նախատեսվում է իրականացնել շուրջ 15.4կմ երկարությամբ ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

2020թ. նախատեսվում է համայնքների սուբվենցիայի ծրագրերով իրականացնել ասֆալտապատման աշխատանքներ:

2020թ. տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 3,124.9 մլն դրամ:

7.2. Խմելու ջրամատակարարում և ջրահեռացում

Մարզի բնակչությանը կայուն, հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջրամատակարարման բարելավումը ոլորտի զարգացման նպատակներից է: Համայնքների շուրջ 52%-ում առկա է շուրջօրյա ջրամատակարարում:

Ոլորտի թույլ կողմն է՝ մարզում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածության խնդիրը, իսկ որպես սպառնալիք՝ ջրամատակարարման համակարգի կախվածությունը էլեկտրաէներգիայից:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման ծրագրով, 2020թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Արմավիրի մարզի 7 համայնքներում նախատեսվում է իրականացնել ջրամատակարարման համակարգի վերակառուցման /նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման/ ծրագրեր՝ 51,112.2 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

2020թ. հրատապ ծրագրերով Շենավան և Ծաղկալանջ համայնքների խմելու ջրի ներհամայնքային համակարգի հիմնանորոգման համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է իրականացնել 50.0մլն. դրամի ծրագրեր:

2020թ. ընթացքում ոլորտում ծրագրեր կիրականացվեն «Վիոլա ջուր» ՓԲԸ-ի, պետական, համայնքային միջոցներով:

2020թ. ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի բյուջեն կազմում է 5,047.1 մլն դրամ:

7.3. Գազաֆիկացում

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից է: Մարզի 97 համայնքներից 87-ը գազաֆիկացված են, մնացել է լուծելու 10 համայնքների (Բերքաշատ, Արաքս(Էջմ.), Մեծամոր, Հայկաշեն, Լեռնամերձ, Երվանդաշատ, Բազարան, Արգինա, Արտամետ, Կողբական) խնդիրը, որտեղ բնակվում է մարզի բնակչության 3.2%-ը:

2020թ. «Գազարում Արմենիա» ՓԲԸ-ի կողմից, սեփական միջոցներով մարզում նախատեսվում է իրականացնել 151.9մլն դրամի աշխատանքներ:

2020թ. նախատեսվում է համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնել 160.0 մլն դրամի ոլորտային ծրագրեր:

2020թ. ակնկալվում է, որ մարզի չգազաֆիկացված որոշ համայնքներում ևս Լեռնամերձ համայնքի օրինակով կտեղադրվեն արևային կայաններ:

2020թ. գազաֆիկացման ոլորտի բյուջեն կազմում է 316.9 մլն դրամ:

7.4. Էներգետիկա

Էներգետիկայի ոլորտի զարգացման նպատակներից է շենք-շինությունների, փողոցային լուսավորության և տարբեր նշանակության օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության մակարդակի բարձրացումը:

2020թ. մարզում կշարունակվեն ՀՀ պետական բյուջե՝ վարկային միջոցներ/ՌԴ աջակցություն Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման շրջանակներում ենթավարկի տրամադրում «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ին և Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվող ներդրումները շուրջ 20,880.2մլն. դրամ ընդհանուր արժեքով: Ծրագրի շրջանակներում նոր աշխատատեղերի ստեղծում չի նախատեսվում:

2020թ. «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից Արմավիրի մարզում նախատեսվում է ներդրումային ծրագրեր իրականացնել սեփական և վարկային միջոցներով՝ 3,380.0մլն դրամի ծրագրեր:

Նախատեսվում է ոլորտում իրականացնել պետական, համայնքային և մասնավոր միջոցներով մի շարք այլ ծրագրեր:

2020թ. էներգետիկայի ոլորտի բյուջեն կազմում է 24,439.5 մլն դրամ:

VIII. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգումը, համայնքների գլխավոր հատակագծերի, շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը քաղաքաշինության ոլորտի զարգացման նպատակներն են:

2020թ. նախատեսվում է ամբողջությամբ ավարտին հասցնել նախկինում մասնակիորեն վերանորոգված, սակայն ֆինասնական հատկացումների բացակայության պատճառով չավարտված Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոցի, Հայկավանի և Շենիկի մշակույթի տների հիմնանորոգման աշխատանքները՝ պետական որևէ ծրագրում ընդգրկելու ակնկալիքով՝ շուրջ 130.0 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Նախատեսվում է ոլորտում իրականացնել պետական, մասնավոր, համայնքների միջոցներով մի շարք ծրագրեր:

2020թ. քաղաքաշինության ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 124.0 մլն դրամ:

IX. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

9.1. Տարածքային կառավարում

Մարզի երրորդ ռազմավարական նպատակն է՝ մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացումը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավումը:

2020թ. ընթացքում նախատեսված է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների և պարտականությունների, անվանացանկի վարման, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու գործընթացը:

2020թ. ընթացքում իրականացնելու են փաստաթղթաշարժի էլեկտրոնային կառավարման համակարգի նոր՝ «Mulberry 2.0» տարբերակին անցումը կազմակերպելու աշխատանքները, ինչպես նաև աշխատակիցների ուսուցումը:

Մարզպետարանի և մարզի համայնքապետարանների աշխատակազմերի պարտադիր վերապատրաստումները դարձել են կարողությունների զարգացման շարունակական գործընթացներ: 2020թ. նախատեսվում է մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ 109 քաղաքացիական և 50-300 համայնքային ծառայողներ (համապատասխան ծրագրերի առկայության դեպքում):

2020թ. տարածքային կառավարման ոլորտի առաջնահերթություններն են՝

- Տարածքային կառավարման նոր օրենսդրության մշակմանը ակտիվ մասնակցությունը,
- Մարզային և տեղական դերակատարների կարողությունների հզորացման նպատակով վերապատրաստումների կազմակերպումը,
- Հանրապետական միջոցառումներին մարզի ներկայացուցիչների մասնակցության ապահովումը.
- Մարզպետարանի աջակցությամբ կամ ուղղակի գործողություններով մարզում կատարված ներդրումների ծավալի ավելացումը,
- Մարզում չօգտագործվող պետական և համայնքային գույքի հաշվառումը, ըստ պիտանելիության աստիճանի դասակարգումը և իրականացվելիք ծրագրերի համար որպես արտադրական և գրասենյակային տարածքներ օգտագործելու համար սեփականատերերի հետ քննարկումների կազմակերպումը:

2020 թվականին ևս Արմավիրի մարզը կշարունակի համագործակցությունը նախկինում հաստատված կապերով՝ Արմավիրի մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

2020թ. պետական բյուջեով հատկացվել է 603.1 մլն դրամ մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովման, 3,3մլն դրամ՝ մարզպետարանի տեխնիկական հագեցվածության և 5.1 մլն դրամ՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրման համար:

9.2. Տեղական ինքնակառավարում

2020թ. տեղական ինքնակառավարման ոլորտի առաջնահերթություններն են.

- Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպումը,
- Նոր ձևավորվող համայնքների աշխատակազմերի կարողությունների հզորացումը,
- ՏԻՄ ընտրությունների արդյունքում նոր համայնքի ղեկավար ընտրված համայնքների, ինչպես նաև նոր ձևավորվող համայնքների զարգացման ծրագրերի մշակումը,
- Պետական նպատակային հատկացումներ՝ 2020թ. սուբվենցիաներ ստանալու նպատակով հայտերի մշակումը և սահմանված կարգով ներկայացումը:

2020թ. կշարունակվեն մարզի բոլոր համայնքների էլեկտրոնային ծրագրում մուտքագրված վարչական տվյալների հավաքագրման և կիսամյակային, տարեկան պարբերականությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացման աշխատանքները:

2020թ. պլանավորվել է մարզի համայնքային բյուջեների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ՝ 36.9%:

2020թ. համայնքների տրամադրվող դոտացիաների չափը կազմում է 4,750,085.7 հազ. դրամ:

2020թ. ընթացքում նախատեսվում է շարունակել համայնքային ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, ինչպես նաև համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների անցկացման աշխատանքները:

2020թ. ընթացքում կիրականացվի համայնքների ավագանիների հերթական նիստերի անցկացման հսկողություն՝ ըստ ժամանակացույցի:

9.3. Քաղաքացիական հասարակություն

2020թ. նախատեսվում է շարունակել համագործակցության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ հասարակական, միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, համայնքային միավորումների հետ:

2020 թվականին տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի գործունեության կարևոր ուղղություններից մեկը կլինի հասարակության լայն խավերի ընդգրկումը, մասնակցությունը մարզային և համայնքային զարգացման գործընթացներին: Համայնքների բնակիչների շրջանում իրավունքների և պարտականությունների մասին իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովումը:

9.4. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն

Մարզում տեխնաձին արտակարգ իրավիճակների ծագման հիմնական սպառնալիք են համարվում ՀԱԷԿ-ի վթարները, վտանգավոր նյութեր տեղափոխող ավտո և երկաթուղային տրանսպորտային միջոցների վթարները, քիմիական վտանգավոր օբյեկտներում առաջացած վթարները, հրդեհապայթումավտանգ օբյեկտների վթարները, ավտովթարները, կենցաղային հրդեհները:

2020 թվականին ևս բնական և տեխնաձին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրները մարզպետարանի ուշադրության կենտրոնում կգտնվեն: Գարնանային հնարավոր հեղեղումները կանխարգելելու նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն հետևյալ միջոցառումները. հեղեղավտանգ տեղամասերի հետախուզում, վտանգավոր տեղամասերի հայտնաբերում, կանխարգելիչ աշխատանքների գնահատում, գետի հունի մաքրում և ափերի ամրացում, սելավատարի հունի մաքրում և ափերի ամրացում: Կարկուտի հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է մարզի մնացած համայնքներում շարունակել հակակարկտային կայանների և ցանցերի տեղադրման աշխատանքները:

Շենքերի և շինությունների փլուզումից, հնարավոր հետևանքներից խուսափելու համար նախատեսվում է իրականացնել դրանց ամրացման աշխատանքներ:

Ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով անհրաժեշտ է իրականացնել վթարային կամուրջների ամրացման և վերականգնման աշխատանքներ: Ձմեռային սեզոնի համար ավազի և աղի պաշարների կուտակում, համապատասխան տեխնիկայի նախապատրաստում:

Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները, աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

ՀՀ Արմավիրի մարզում իրականացվելու են սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքներ՝ համաձայն ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի (ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 10-ի N 429 որոշում)՝ պետական բյուջետային ֆինանսավորման սահմաններում և առկա կադրային ռեսուրսներով: ՀՀ կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի և բնակավայրերի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառման, արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման մասին» N 1351-Ն որոշմամբ ծրագրի շահառուներ են հանդիսանում ՀՀ մարզերն ու համայնքները:

ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի նիստի N 14 արձանագրային որոշման 2-րդ կետով հավանության է արժանացել աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը: 2020թ. պլանավորվում է համագործակցելով ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ, տարեկան պարբերականությամբ, աղետների ռիսկի կառավարման համայնքային ծրագրերի մոնիթորինգի և արդյունքների գնահատման վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

2020թ. ոլորտի ընդհանուր բյուջեն կազմում է շուրջ 5,361.7 մլն դրամ:

X. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարզի 2020 թվականի գործունեության ծրագիրը մշտադիտարկման կենթարկվի ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից՝ առաջընթացի և մարզի ռազմավարական նպատակներին հասնելու առումով: Կատարողական ցուցիչները տարեկան կհաղորդվեն և կգնահատվեն ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից, արդյունքները կներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

XI. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2020Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2020 թվականին ՀՀ Արմավիրի մարզի բոլոր ոլորտների ծրագրերի իրականացման համար պահանջվող ֆինանսավորումը կազմում է 60,859,022.7 հազ. դրամ, որից՝

- **պետական բյուջե** **54,844,131.0 հազ.դրամ**
 - սեփական միջոցներ *25,291,441.6 հազ.դրամ*
 - վարկային միջոցներ *29,552,689.4 հազ. դրամ*
- **համայնքային բյուջե** **1,683,063.4 հազ.դրամ**
- **մասնավոր ներդրողներ** **3,979,828.3 հազ. դրամ**
- **այլ աղբյուրներ** **352,000.0 հազ.դրամ:**

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- Հավելված 1** - ՀՀ Արմավիրի մարզի 2020 թվականի գործունեության ծրագրի
տրամաբանական հենք
- Հավելված 2** - ՀՀ Արմավիրի մարզի 2020 թվականի գործունեության ծրագրով
նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը՝ ըստ ոլորտների
- Հավելված 3** - ՀՀ Արմավիրի մարզի 2020 թվականի գործունեության ծրագրով
նախատեսված բոլոր ոլորտների ամփոփ ֆինանսավորումը

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔ

I. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ամփոփ նկարագիր	Ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուր	Պատասխանատու օղակ	Ժամկետ	Ռիսկեր/ նախադրյալներ
<u>Ռազմավարական նպատակ 1</u> Մարզում տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով	2020թ. մասնավոր ներդրումների ծավալ՝ 200.0 մլն դրամ Մարզում ստեղծված նոր կազմակերպությունների քանակ՝ 15	Շահառու ձեռնարկությունների հարկային հաշվետվություններ ԱՎԾ տարեկան հաշվետվություններ Ծառայությունների մատուցման գրանցամատյաններ Համայնքապետարանների հաշվետվություններ	Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	Տնտեսական կայունություն մակրոմակարդակում
Ծրագիր 1. Ներդրումների ներգրավում					
Համայնքապետարանների, մասնավոր ներդրողների հետ համատեղ ներդրու-մային փաթեթների մշակում և ներկայացում շահագրգիռ ներդրողների Ներդրումային համաժողովի անցկացում, ծրագրերի ներկայացում Մարզային զարգացման ներդրումային փաթեթների կազմում և ներկայացում ներդրողներին Կապերի հաստատման միջոցառումների կազմակերպմանն աջակցություն՝ ցուցահանդեսներ, կլոր սեղաններ, ուսուցողական այցեր և այլն	Համայնքային ներդրումային ծրագրերի թիվը՝ 20 Մշակված և շահագրգիռ ներդրողներին ներկայացված համայնքային և մարզային ներդրումային փաթեթների թիվը՝ 20 Ներդրումային համաժողովի մասնակիցների թիվը՝ 100-150	Հանդիպումների արձանագրություններ Ֆորումի մասնակիցների ցանկ Պայմանագրեր	Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին ՀՀ ՏԿԵՆ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՏՀՀ	2020թ.	Գործուղումների պլանավորված գումարներ և ժամանակացույց Համագործակցության համաձայնեցված շրջանակ ՀՀ- ի հետ

Ծրագիր 2. Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրեր					
Համայնքների զարգացման ծրագրերում տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքային ծրագրերի ներառում Համայնքապետարանների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի կազմում Ծրագրերի վերանայում և համաձայնեցման ներկայացում	Սուբվենցիոն ծրագրերի քանակ՝ 70 Ֆինանսավորված ծրագրերի քանակ՝ 60	Ծրագրեր Ծրագրային հայտեր Ֆինանսավորման պայմանագրեր	Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին Համայնքապետարաններ ՀՏՀՀ ՏԿԵՆ	2020թ.	Համաձայնեցված գործողություններ ՀՏՀՀ և ՏԿԶՆ-ի հետ
Ծրագիր 3. ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն					
–Համայնքապետարանների և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ սկսնակ գործարարության աջակցության ծրագրերի պահանջարկի վերհան-մանը և գործող ՓՄՁ-ների կարիքների բացահայտ-մանը մասնակցություն –Աջակցություն խմբերի հավաքագրման գործում –Գործող ՓՄՁ-ների համար դասընթացների և խորհրդատվության կազմակերպման աջակցություն –ՓՄՁ ՋԱԿ-ին ծրագրային առաջարկի ներկայացում	Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության դասընթացների թիվը՝ 2 Դասընթացներին մասնակից սկսնակ գործարարների քանակը՝ 30 Ֆինանսական աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների քանակ՝ 7-10 Վարկային երաշխավորության տեսքով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարը՝ 30-40 մլն դրամ	Համայնքապետարանների հաշվետվություններ Մոնիտորինգի հաշվետվություններ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի հաշվետվություններ	Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ	2020թ.	

II. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Ամփոփ նկարագիր	Ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուր	Պատասխանատու օղակ	Ժամկետ	Ռիսկեր/նախադրյալներ
Ոլորտային նպատակ ՀՀ Արմավիրի մարզում նպաստել տուրիզմի զարգացմանը շեշտը դնելով հոգևոր, մշակութային, գյուղական և ագրո տուրիզմի վրա Աջակցություն համայնքների զբոսաշրջային գրավչությունների գույքագրման, զբոսաշրջային ներուժի բացահայտման, ինչպես նաև զարգացման ծրագրերի մշակման աշխատանքներում	Ներդրումների ծավալը՝ 350.0 մլն դրամ Մարզի զբոսաշրջային նոր քարտեզի առկայություն՝ այո/ոչ Մշակված նոր երթուղիների թիվ՝ 2 Զբոսաշրջային գրավչությունը լուսաբանող, գովազդող համապատասխան տեսանյութ՝ 2 Զբոսաշրջիկների և այցելուների թվաքանակի աճ նախորդ տարվա համեմատ՝ 5% Կազմված էլեկտրոնային բազա՝ 1 Մշակվող զբոսաշրջային ծրագրային առաջարկների թիվը՝ 10	Համայնքապետարանների հաշվետվություններ	Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	Շուկայում մրցակցային միջավայրի բարենպաստ պայմանների առկայություն

III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ամփոփ նկարագիր	Ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուր	Պատասխանատու օղակ	Ժամկետ	Ռիսկեր/նախադրյալներ
Ռազմավարական նպատակ 2 ՀՀ Արմավիրի մարզի թույլ զարգացած տարածքների անհամաչափությունների նվազեցում	2020թ. ընդհանուր ներդրումների ծավալը՝ 5,054.2 մլն դրամ Գյուղատնտեսական աշխատանքների սեզոնում սեզոնային աշխատատեղերի թիվը՝ 3000 Փաստացի ոռոգվող հողերի մակերեսի ավելացում 100հա-ով (2018թ.՝ 41970.05հա) Կառուցված սպանդանոցի թիվը՝ 1 Սպանդանոցի հզորությունը՝ 400 տոննա/տարի Նոր սառնարանային տնտեսությունների թիվը՝ 15 Նոր սառնարանային տնտեսությունների հզորությունը՝ 150 տոննա Ավելացած ջերմատների տարածքը՝ 15 հա	Համայնքապետարանների հաշվետվություններ Հողային հաշվեկշիռ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություն Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի հաշվետվություն	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	

	Ավելացած չորանոցների տարածքը 0.5հա Փոքր ֆերմերային տնտեսությունների թիվը՝ 1420 (2018թ. 1420) Միջին ֆերմերային տնտեսությունների թիվը՝ 278 (2018թ. 278) Խոշոր ֆերմերային տնտեսությունների թիվը՝ 199 (2018թ. 199) Բույսեր պաշտպանության միջոցառումներ. Նախատեսված տարածքը՝ 4692 հա Թունանյութի քանակը՝ 308.6 /կգ; Վ/				
Ծրագիր 1՝ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի» պետական աջակցության ծրագիր					
Ծրագրի իրականացմանն աջակցություն	Ծրագրերի շահառուների թիվը՝ 10 Տրամադրված գյուղտեխնիկայի քանակը՝ 10 (2018թ. 23 տրակտոր, 20 գործիք)	ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվություն Համայնքապետարանների հաշվետվություններ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	
Ծրագիր 2՝ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր					
Հայտավորման, դասընթացների անցկացման, հավաստագրման գործընթացին աջակցություն	Շահառուների թիվը՝ 400 Պետական բյուջեից մարզին տրամադրվող միջոցներ՝ 360255.8 հազ. դրամ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություն Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի հաշվետվություն	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն	2020թ.	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի հետ համաձայնեցված գործողություններ
Ծրագիր 3՝ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագիր					
Ծրագրի իրականացմանն աջակցություն	Նախատեսված տարածությունը՝ 37 հա Շահառուների թիվը՝ 37 Նախատեսված գումարը՝ 19960.0 հազ. դրամ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվություն Համայնքապետարանների հաշվետվություններ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն, Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	

Ծրագիր 4՝ «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագիր					
Ծրագրի իրականացմանն աջակցություն	Նախատեսված տարածությունը՝ 14 հա (2018թ. 163.39 հա) Շահառուների թիվը՝ 14 Նախատեսված գումարը՝ 25000.0 հազ. դրամ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություն Համայնքապետարանների հաշվետվություններ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն Հարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	
Ծրագիր 5՝ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից խորհրդատվական ծառայություններ					
Համայնքների գյուղացիական տնտեսությունների հետաքրքրությունների բացահայտմանն ու կարողությունների զարգացմանն ուղղված գործողություններ, հանրային իրազեկման բարձրացում	Խմբային դասընթացներ՝ 12 Ծրագրային դասընթացներ՝ 26 Անհատական խորհրդատվություն՝ 950	ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություն Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի հաշվետվություն	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն	2020թ.	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի հետ համաձայնեցված գործողություններ

IV. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամփոփ նկարագիր	Ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուր	Պատասխանատու օղակ	Ժամկետ	Ռիսկեր/ նախադրյալներ
<u>Ոլորտային նպատակ</u> Արմավիրի մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում	2020թ. ընդհանուր ներդրումների ծավալը՝ 39.0 մլն դրամ Փակված աղբավայրերի թիվը՝ 5 (2018թ.՝ 125) Շահագործվող աղբավայրերի թիվը՝ 47 (2018թ.՝ 46) Աղբահանություն իրականացնող համայնքների թիվը՝ 97 (2018թ.՝ 89) Ֆիզիկական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները՝ 222.9 մլն դրամ Իրավաբանական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները՝ 77.2 մլն դրամ	Համայնքապետարանների հաշվետվություններ Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վերլուծություն	Քաղաքաշինության վարչություն Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն Հարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	

V. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

V.I. Կրթություն

Ամփոփ նկարագիր	Ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուր	Պատասխանատու օղակ	Ժամկետ	Ռիսկեր/ նախադրյալներ
<u>Ոլորտային նպատակ</u> Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Արմավիրի մարզում	2020թ. ընդհանուր ներդրումների ծավալը՝ 10,866.9 մլն դրամ Աշակերտների թիվը՝ 34635 (2018թ.՝ 30771) Մանկավարժների թիվը՝ 3656 (2018թ.՝ 2579) Օլիմպիադաների մրցանակակիրների թիվը՝ 20 (2018թ.՝ 30) Շրջանավարտների թիվը՝ 1150 (2018թ.՝ 702) Միջազգային կամ ՀՀ պետական ԲՈՒՀ-երում ուսումը շարունակողների թիվը՝ 70% (2018թ.՝ 519) Ներառական կրթության համակարգում աշակերտների թիվը՝ 248 Ներառական կրթության համակարգում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը՝ 4.02 Ոլորտային քննարկումների և միջոցառումների անցկացում՝ 20	Դպրոցների հաշվետվություններ	Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն Զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	

V.II. Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր

Ամփոփ նկարագիր	Ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուր	Պատասխանատու օղակ	Ժամկետ	Ռիսկեր/ նախադրյալներ
<u>Ոլորտային նպատակ</u> Բարձրացնել մարզամշակութային ծառայությունների մատչելիությունը և որակը Արմավիրի մարզում Աջակցություն և մասնակցություն մշակութային և	2020թ. ընդհանուր ներդրումների ծավալը՝ 122.4 մլն դրամ Մարզային գրադարան այցելուների, հանդիսատեսի, ընթերցողի թվաքանակը՝ 7200 Թանգարաններ այցելուների թիվը՝ 100000 Թատերահամերգային միջոցառումներ թիվը՝ 50 Ցուցահանդեսների թիվը՝ 15	Համայնքապետարանների հաշվետվություններ ՀՀ մշակույթի նախարարության տեղեկատվություն Մշակութային, մարզական կազմակերպությունների տեղեկատվություն	Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն Զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	

մասսայական սպորտի ոլորտի ծրագրերի իրականացմանը	Կինոցուցադրությունների թիվը՝ 12 Փառատոնների թիվը՝ 2 Մշակույթի ոլորտում				
Մարզի համայնքներում տարաբնույթ մարզամշակութային ծրագրերի կազմակերպում և անցկացում	միջազգային/հանրապետական օլիմպիադաների մրցանակակիրներ՝ 20 Սպորտի ոլորտում միջազգային/հանրապետական օլիմպիադաների մրցանակակիրներ՝ 12				

Վ.ՈՒՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՈՒՄ

Ամփոփ նկարագիր	Ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուր	Պատասխանատու օղակ	Ժամկետ	Ռիսկեր/ նախադրյալներ
----------------	-------------	------------------------	-------------------	--------	-------------------------

Ոլորտային նպատակ Բարելավել բժշկական ծառայությունների որակը Արմավիրի մարզում	2020թ. ընդհանուր ներդրումների ծավալը՝ 3023.0 մլն դրամ Առողջապահական կազմակերպությունների տարեկան բյուջեում վճարովի ծառայությունների տեսակարար կշիռը՝ 10% Վճարովի ծառայությունների կշիռը գլոբալ բյուջեի շրջանակներում ստացված ֆինանսավորման նկատմամբ՝ 20% (2018թ.՝ 17.3%) Մատուցված վճարովի ծառայությունների ընդհանուր գումարը՝ 450 մլն դրամ (2018թ.՝ 414 մլն դրամ) Վճարովի ծառայություններից մուտքերի տոկոսը ընդամենը եկամուտի նկատմամբ՝ 22% (2018թ.՝ 21%)	Բուժհաստատությունների հաշվետվություններ	Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	
---	---	---	---	--------	--

Վ.ԻՎ.Սոցիալական պաշտպանություն

Ամփոփ նկարագիր	Ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուր	Պատասխանատու օղակ	Ժամկետ	Ռիսկեր/ նախադրյալներ
Ոլորտային նպատակ Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը Արմավիրի մարզում	2020թ. ընդհանուր ներդրումների ծավալը՝ 2789.5 մլն դրամ Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրում ընդգրկված ընտանիքների թվի տեսակարար կշիռը մարզի ընտանիքների ընդհանուր թվի մեջ՝ 6%	ՍԱՏԳ-ների հաշվետվություններ	Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	
Ծրագիր 1՝ Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատագրված ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում					

Ծրագրի իրականացմանն աջակցություն և հանրային իրազեկման բարձրացում	Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը՝ 48 Տրամադրվող կրթաթոշակ՝ Նախատեսվող ֆինանսական միջոցները՝ 3960.0 հազ. դրամ Ուսուցման կազմակերպում՝ Նախատեսվող ֆինանսական միջոցները՝ 4380.0 հազ. դրամ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվություն	Աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին	2020թ.	
